

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԸ ՂԱԶԱՐ ՓԱՐԱԾՑՈՒ «ԹՂԹԻ» ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆ

Ղազար Փարպեցու «Թուղթը» հինգերորդ դարի գրական հարստության երևելի դրսևորումներից է: Այս «Թուղթն» ունեցել է հետաքրքիր ճակատագիր: Երկար ժամանակ նրա շուրջ պահպանվել է լռություն և, ինչպես վկայում են փաստերը, հայ եկեղեցու գործիչները այդ թղթի մասին մինչև 19-րդ դարը ուղղակի առումով անդրադարձեր չունեն:

«Թղթի» գրական տեսակը լայն տարածում է ունեցել համընդհանուր քրիստոնեական գրականության մեջ: Այդ մասին Բրոկհաուզ-եֆրոնի կազմած հանրագիտարանում կարդում ենք. «Послание в христианской литературе послеапостольской, одна из главных форм позднейшей литературы христианской. В веке «мужей апостольских» это была почти единственная форма сочинений, излагавших христианское вероучение и нравоучение, а равно *устройство взаимных отношений и внешний быт христиан*. ...Но и на долю «посланий» во II и III вв, а также и в последующее время, осталась обширная область»¹.

Հիրապի ճշգրիտ բնորոշում է տրված Թղթի ժանրին: Ղազար Փարպեցու «Թղթում» առկա են և՛ հոգևորականների ներքին փոփոխարարելությունները, և նրանց արտաքին քրիստոնեական կենցաղը: Ղազար Փարպեցու «Թուղթը» 1829-ին էջմիածնի մատենադարանի ձեռագրերի մեջ գտել է արքեպիսկոպոս Հովհաննես Շահխաթունյանը: Այդ թղթի ընդօրինակությունը Ձմյուռնիայի Ասեր վարժապետը իր հետ տանում է Բեսարաբիայի Քիշինև քաղաքը, մյուս օրինակը մնում է Հ.Շահխաթունյանի մոտ², որից 1848 թվականին վանք այցելած

¹ Ф.А.Брокгауз, И.А.Ефрон, Энциклопедический словарь, т. XXIV, С.Петербург, 1898, стр. 679.

² Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Ղազար Փարպեցու «Թղթի» միայն մի օրինակ: Այն գտնվում է թիվ 8843 գրչագրում, որն ընդօրինակվել է 1830-ին, էջմիածնում (տես Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Բ, Կազմեցին Օ.Եզանյան, Անթրաքյան, Ցանկերը և համեմատական տախտակները Օ.Եզանյանի, Խմբագրությամբ Լ.Խաչիկյանի և Ա.Սնացականյանի, Երևան, 1970, էջ 823): Իսկ Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունից» մի հատված կա միայն նույն Մատենադարանի թիվ 8917 ձեռագրում, որը «ճառընտիր» է գրված ժժ դարում: Այդ հատվածը խորագրված է «Ի Պատմութենէ Ղազարայ Փարպեցւոյ: Տեսիլ Սահակայ Պարթևի (տես նույն տեղում, էջ 835):

Մ.Էմինին նա կարդում է մի քանի հատվածներ և խոստանում թղթի պատճենն ուղարկել Մոսկվա, որը և կատարում է անհապաղ: Սսեր վարժապետը գնում է Մոսկվա, և Էմինը նրա ձեռքին տեսնում է Ղազար Փարպեցու «Թղթի» նույն օրինակը, որն ինքն ուներ: Ահա բաղդատելով այդ երկու օրինակները հայագետը պատրաստում է տպագիրը, որը լույս է տեսնում Մոսկվայում, 1853-ին: «Թղթի» տպագիր օրինակին կցում է ընդարձակ նախաբան ու ծանոթագրություններ: Մկրտիչ Էմինը խոստովանում է, թե Ղազար Փարպեցու «Թղթի» մեջ կան մուր տեղեր, որոնք հնարավոր չէ ծանոթագրել և այդ գործը թողնում է հետագայի հետազոտողներին. «...Չայլ թերութիւնս նորին ժամանակին թողլով լցուցանել և քան զմեզ հմտագունից»³: Որքան էլ հայագետը անկատար է համարում իր պատրաստած բնագիրը, որքան էլ գանգատվում է նրա որոշ անվերժանելի հատվածներից, բայց հայնպես նա կատարել է բանասիրական առումով խիստ կարևոր մի գործ, որի նշանակությունն այսօր էլ դեռ արժեքավոր է: Թղթի հրատարակության համար նա բնաբան է ընտրում նույն երկի հետևյալ հատվածը. «Եւ այսք այսպէս թշնամանեալք և հայիոյանօք հալածեալք ոչ յերեկոյս ինչ ժամանակաց գրուցատրութեամբք յումեքէ համբաւուց ծանուցու մեզ, այլ առ մեօք իսկ և ի մերում ժամանակի եղեալ տեսաք զայս ամենայն» (Թուղթ Ղազարայ առ Վահան)⁴:

«Թղթին» կցված գրաբար առաջաբանում Մ.Էմինը մեծ ու փառավոր է համարում հինգերորդ դարը, որը կոչում է թարգմանչաց և «յիրաւի ոսկի դար Զայաստան աշխարհի կոչի»: Նա շեշտում է, թե այդ դարի ողջ ընթացքը կարգավորեցին երկու նշանավոր այրերը՝ Սահակը և Մեսրոպը, իրենց բազմաթիվ աշակերտներով: Նրանց նպատակն է եղել Զիսուսի ավետարանական ուսմունքը հայոց ազգի մեջ ամրացնելը և մայրենի լեզուն անմահացնելը: Բանասերի կարծիքով հայ ժողովուրդը հավերժ պարտական է հինգերորդ դարին, որոնք հալածանքների, չարչարանքների գնով արթուն և առողջ են պահել ազգային ոգին. «Նման հանճարիմաստ և յոքներախտ արանց՝ զօգուտ ժողովրդեան և ազգի ունողաց և եթ նըպատակ, որք ի գերագոյնն կէտ ակնապիշ լեալք՝ մոռացան բնաւին զաշխարհայինն և զմարդկայինն, զանձինս յողջակէզ սիրոյն

³ Տես Ղազար Փարպեցի, Թուղթ առ Վահան Տէրն Սամիկոնէից, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, տեսուչ Լազարեան ճեմարանի Արևելեան լեզուաց, Մոսկվա, 1853, էջ 31: Ղազար Փարպեցու «Թղթի» երկրորդ հետազոտողը՝ Միքայել Նալբանդյանը, պատմիչի այդ նշանավոր գործը թարգմանեց աշխարհաբարի, այն առավել մանրամասն ծանոթագրեց շատ հարցերում հայտնելով իր անհամաձայնությունը, Մ.Էմինի մեկնություններին: Մ.Նալբանդյանը որպես բնագիր հիմք է ընդունել Էմինյան հրատարակությունը (տես Ղազար Փարպեցու գրած Թուղթը, Մեղարդութիւն ստախոս արեղաներին, թարգմանութիւն և քաջատրութիւնք Մ.Նալբանդեանց, Ս.Պետերբուրգ, 1868):

⁴ Ղազար Փարպեցի, Թուղթ առ Վահան Սամիկոնէից, էջ 5:

հայրենեաց մատուցանելով...»: Եմինը հիշեցնում է այն հայտնի ասացվածքը, թե «Սարգարե յիրում գաւառի պատիւ ոչ ունի, և չիք մա ակնկալու լինել երախտագիտութեան ժամանակաց»: Շատ էական է բանասերի այն նկատումը, թե Փարպեցու «Թուղթը» լույս է սփռում մեր *թարգմանիչների ներքին, ինչպես նաև առտնին կյանքի վրա*⁵:

Եմինը չի մոռանում նշել, թե արևմտյան ազգերի պատմագիրները, հին ժամանակներից սկսած, մանրամասն տեղեկություններ են հաղորդում իրենց ազգի հայտնի անձերի մասին, որոնցով պարզորոշ ներկայացնում են նրանց մարդկային կյանքի տարբեր կողմերը, որոնք նման են մեր կյանքին ու առօրյային: Այդ փաստերից իմանում ենք նրանց խնդության, թախծի, հուսադրման ու վհատվելու մասին: Եվ ամեն մարդ իմանալով այդ մասին իր վշտի ու տառապանքների ժամանակ հուսադրվում է հիշելով նրանց օրինակը⁶:

Եմինի կարծիքով իրականում Կորյունը շատ քիչ բան է հաղորդում Մաշտոցի կյանքի մասին, «ըստ իս և ոչինչ»: Եվ ընթերցողը ոչինչ չի իմանում Մաշտոցի ծննդի, տղայական հասակի, մանկական տարիների բնավորության, ուսման սկզբնական շրջանի, չգիտի, թե նա ինչ ծնով է զարգացել և հասել հանճարեղ իմաստությանը⁸:

Ահա այս առումով Ղազար Փարպեցու «Թուղթը» համարում է նշանակալի և ճանաչողական: Եմինի կարծիքով, եթե այդ «Թուղթը» չլիներ, ապա պիտի իմանայինք, որ Ղազարը եղել է հինգերորդ դարի և վեցերորդ դարասկզբի գործիչ, «էր յաշակերտաց սրբոց թարգմանչաց»: Այս վերջին եզրահանգումը խստորեն մերժվել է Միքայել Նալբանդյանի ծավալուն ծանոթագրության մեջ, որում վերջինս համոզիչ փաստարկներից հետո եզրակացնում է. «Ձիարդ և իցե այս է Ճշմարիտը, որ Փարպեցին Մեծ թարգմանչաց ոչ աշակերտ է եղել և ոչ նոցա հրամանով Գունաստան գնացել, թող այսուհետև ով ինչ կամի, խոսի»:

⁵ Նույն տեղում, էջ 6:

⁶ Նույն տեղում, էջ 8:

⁷ Նույն տեղում: Մ.Եմինի այս պահանջը խիստ համահունչ է Րաֆֆու «Սամվել» պատմավեպի «Հառաչանք» հետևյալ հատվածի հետ «Սենք կարդում ենք նրա մեջ մեր թագավորների, մեր իշխանների անունները, ծանոթանում ենք նրանց ներքին կոիվների ու արտաքին պատերազմների հետ, գիտենք, թե որը որքան տարի տիրեց, կամ ինչ լավ և վատ գործեր կատարեց, այդ բոլորը գիտենք մենք: Բայց թե ինչպե՞ս էր կազմակերպված նրանց ընտանեկան կյանքը, ի՞նչ սովորություններ ունեին, ինչպե՞ս էին «հագնում, ի՞նչ տեսակ տների մեջ էին ապրում, մի խոսքով, իբրև մութ մարդ, նրանց ընտանեկան և հասարակական կենցաղավարության մասին մեր պատմությունը, եթե չասեն իսպառ, կարող են ասել մեծ մասամբ լուռ է:

Բայց վեպի համար հարկավոր է ընթացիկ, շարժուն կյանքը յուր բոլոր երևույթներով» (տես Րաֆֆի, Սամվել, Երևան, 1956, էջ 5-6):

⁸ Ղազար Փարպեցի, Թուղթ առ Վահան Տերն Մամիկոնից, էջ 8-9:

⁹ Մ.Նալբանդյանց, Ղազար Փարպեցու գրած Թուղթը, էջ 47:

Ակրտիչ էմինը Ղազար Փարպեցու պատմության մեջ էլ առանձնացնում է էջեր, որոնցում նկարագրվում է հայ լուսավոր մտքերի հալածված լինելու հանգամանքը, նաև հիշեցնում է, թե այդ մասին կա նաև Եղիշեի «Ճառ յաղագս միանձաց» աշխատության մեջ, ինչպես նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմության» զանազան հատվածներն է մատնացույց անում: Եղիշեի «Ճառ յաղագս միանձաց» երկում կարդում ենք. «Եւ այդ ես տեսանեմ ի մերում աշխարհիս և ոչ զոք ազատեալ յայսպիսի աղետից: Յետս ընդդէմ ընթերցաք զգեղեցիկ գրեալսն, ի պատճառս ուխտագնացութեան հեռացաք ի սուրբ ծնօղացն և արարաք բազում հարս օտարոտիս, զորս պատուելոյ արժանի էր, անարգեցաք, և յորս ոչն ունեաք իշխանութիւն դնել մեծարանս զպիտ աղետից մերոց յոյժ ծախեցաք»¹⁰:

Մովսես Խորենացու պատմությունից հատված է առանձնացնում առաջին գլխից, ինչպես նաև «Ողբից»։ «Ո՞վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն, ո՞վ ուրախացի ընդ առաջադիմութիւն աշակերտիս, ո՞վ գիայրականն բարբառեսցի զուարճութիւն, մասամբ ինչ յաղթահարեալ յորդոյս: Ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւնն ընդդէմ առողջ վարդապետութեանն հակառակ յարուցելոցն, որք ամենայն բանիւք քակտեալք և քայքայեալք յոլովս փոփոխեն վարդապետս և բազում գիրս, որպէս ասաց ոմն ի հարցն. առ ամենայն բան նմանապէս դժուարին, և չար օրինակ գրեն զայն անձանց զծիծաղելն զմեւք և զարհամարհելն իբրև զանհաստատնովք, և որ ոչ ինչ պիտանացու ունիցի արուեստ: Ո՞վ զնոսա ըմբերանեսցէ սաստելով, և զմեզ սփոփեսցէ զովելով, և չափ դնէ բանի և լռութեան»¹¹:

Հինգերորդ դարի հայ լուսավոր այրերի մեջ հալածվածները ըստ Ղազարի «Թղթի», ինչպես նշում է Ս.Էմինը եղել են Մովսես փիլիսոփան, այսինքն՝ Մովսես Խորենացին և տեր Խոսրովիկը: Խոսելով Մովսես Խորենացու հալածանքների մասին նա նշում է, որ «Թղթի» այդ հատվածում, ուր գրված է «Զուսկերսն ի գերեզմանն հանել տային և գետ արկանել...», մասի տողատակում էմինը ունի ծանոթագրություն: «Աստանօր երկու թերթ պակասին»¹²: Բանասերի կարծիքով Ղազարի ծնողները եղել են ականավոր և հարուստ¹³: Ղա նպաստել է, որ վերջինս կրթվի Վրաստանում՝ Աշուշա Բղեշխի տանը, ուր կրթվում էին Ավարայրի դաշտում գոհված Հմայակ Մամիկոնյանի որդիները՝ Հմայակը, Վահանը, Վասակը և Արտաշեսը: Բացի չորրորդից, մյուսները «ուսան և յառաջադէմք հանդիսացան յամենայնի և հռչակաւորք»¹⁴:

¹⁰ Եղիշե, Մատենագիտութիւնք, Վենետիկ, 1838, էջ 217:

¹¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 373:

¹² Ղազար Փարպեցի, Թուղթ առ Վահան Տէրն Մամիկոնից, էջ 16:

¹³ Նույն տեղում, էջ 18:

¹⁴ Նույն տեղում, էջ 19:

Ղազարը սովորել է այդ ժամանակներում նշանավոր Վասակ Արծրունու որդի Աղանի մոտ, որը թողել էր զինվորական ծառայությունը և ընդունել հոգևոր կոչում: Թովմաս Արծրունին հայտնում է, թե Վասակ Արծրունու սքանչելի որդին Աղան Արծրունին, գնում է սուրբ Սահակի մոտ, «առաջի նորա մերկանայր գհանդերծն զհնուութական եւ ողբայր ի վերայ աշխարհիս հայոց»¹⁵: Ղազար Փարպեցին և Վահան Մամիկոնյանը Աղանի ձեռքի տակ կրթվում են Աշուշա Բղեշխի մոտ, որից հետո Ղազարը գնում է ուսման մեջ կատարելագործվելու «Ի Զոռոմս, ուր և յունական ուսմանցն պարապեալ», զինվում է տեսակ-տեսակ գիտելիքներով: Արտասահմանից հետո մնում է Կամսարական իշխանների մոտ, որոնք ազգակից էին Մամիկոնյաններին, «քանզի տէրն Արշարունեաց Արշալիր ի կնութեան ունէր *գրուստր քաջին Վարդանայ*»: Այնուհետև երկու տարի ճգնում է Սյունիքի մի քարայրում: Բայց երբ Զայոց աշխարհը խաղաղվում է պարսիկների դեմ մղվող երկրորդ ապստամբության փոթորիկներից, և պարսից արքա Վաղարշից Վահան Մամիկոնյանը ստանում է մարզպանության պաշտոնը, Ղազար Փարպեցին նշանակվում է Նոր քաղաքում Վահանի կողմից զարդարված Կաթողիկե եկեղեցու վանահայր: Մ.Էմինը Նոր քաղաքը չի նույնացնում Վաղարշապատի հետ, մինչդեռ Մ.Նալբանդյանը համոզված պնդում է, թե դա հենց Վաղարշապատն է¹⁶:

Ղազարը ծաղկեցնում է վանքը, և նրա անունը հռչակվում է ամենուր, նախարարները սիրահոծաբ հոգում են վանքի պետքերը: Նախանձ հոգևորականները, ովքեր այք ունեին Ղազարի պաշտոնի վրա, սկսում են դավեր նյութել: Սկստիչ էմինը «Թղթի» տարբեր հատվածներից առանձնացնում է այն մեղադրանքները, որոնցով տգետ արեղաները ամբաստանում էին Ղազարին: Դրանք թվով յոթն են՝

- ա) Ղազարը ասէ, թէ պռնկութիւն մեղք չեն, զսոյն և մարզպանին սա գրէ,
- բ) Թէ Ղազար աղանդավոր է,
- գ) Թէ զան մի պիղծ ոք է և չարագործ Ղազարայ վանք անդէն և սիրէ զնա
- դ) Թէ ի տան վահանայ Ղազար իբրև անօթ էր յաւելորդ, քանզի յաղազս որո՞յ արուեստի մարզպանն զնա սպասավորեալ մեծարէր,

¹⁵ Թովմաս Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Կոստանդնուպոլիս, 1852, էջ 75:

¹⁶ Մեզ թվում է, թե Մ.Էմինը հիմք չունի Նորքի խոսքը հանել, երբ բանը Նոր քաղաքի վրա է և երբ Նոր քաղաքի էլ Վաղարշապատը լինելու վկայությունը ինքն է թերում Փարպեցու ստույգ պատմությունից (տես Մ.Նալբանդյան, Ղազար Փարպեցու գրած Թուղթը, էջ 27): «Զամառոտեմք մեր խոսքը: Փարպեցուն համձնվել է նոր քաղաքի Ա.Կաթողիկե եկեղեցին, իսկ Նոր քաղաքը Վաղարշապատն է և Վաղարշապատի Ա.Կաթողիկե եկեղեցին մեր այսօրվա Ա.Էջմիածինը, ուրեմն Ղազար Փարպեցուն համձնվածը եղել է Զայոց նախամեծար մայր եկեղեցին, նույն ինքը Սուրբ Կրօնիկն Էջմիածինը» (տես նույն տեղում, էջ 36):

ե) Թէ Ղազար գիր ոչ կարդայ և զընթերցումն այնպէս ասէ անսայթաք, որպէս թէ գրողն,

զ) Թէ ի նախնումն գիտնաբար խօսէր Ղազար և այժմ անգիտնաբար: Ոչ ամաչէին յիմարեալքն յաւելու և զայս ի վերոյիշեալ բանասրկութիւնդ,

է) Թէ արդարև յառաջնումն բաջիւղմեղ ասէր Ղազար և զօրաւորս, բայց ապա յարդի ժամս բնաւ վատ ասէր¹⁷:

Ղ. Փարպեցիին այս բոլոր մեղադրանքները մեկ առ մեկ հերքում է և այդ մերժման մանրամասներում ներկայացնում իր հանրագիտակ ու հիրավի անփոխարինելի լինելը: Նա բացատրում է, թէ ինչպէս և ինչ է արել վանական կյանքը սրբակրօն դարձնելու համար: Սկստիչ էմինին հատկապէս դուր է եկել Ղազարի «Թղթի» այն հատվածը, որում նա տգետ արեղաներին համեմատում է փնթի հարսների հետ, որոնց կոյուղու ջուրը թվում է բաղնիք, «Ըստ խոզի հարսնացելոյ կոյաջուր բաղանիք»¹⁸:

Բանասերը հատկապէս առանձնացնում է «Թղթի» այն հատվածը, ուր Ղազարը իրավացիորեն քննադատում է իր ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որը ոչ միայն չի ընդունել Ղազարին, այլ լիովին հավատալով նրան ամբաստանող տգետ արեղաներին, պատասխան է ուղարկել. «Ես և տեսանել իսկ չիշխեն զքեզ առ երկիւղի, դու ասես, եթէ զամ բժշկեն և կամ թաղես, մի գուցէ զգացեալ ուրուք և զիս ընդ քեզ թաղիցէ»¹⁹:

Ղազար Փարպեցիին ընտրել է հետաքրքիր ճարտասանական ձև. երկար բացատրելով իր հալածանքների հանգամանքները, ապացուցելով, որ ինքն անփոխարինելի է. «Եւ եմ ես այն Ղազարը, ըստ առ ի քէն տեսնէ և այլոց բազմաց ասածի, որում ոչ ոք գոյ փոխանակ», «Թղթի» վերջում գետեղել է հայ իրականության մեջ իրենից առաջ եղած այլ լուսավոր անձերի հալածական վիճակը²⁰: Այդ հալածվածների մեջ առաջինը նշում է Մովսէս փիլիսոփային, որի գործերը տգետ հոգևորականներն անվանեցին *փաթաղիկէս*: Այս բառի բացատրությունը էմինը տողատակում մեկնում է հետևյալ կերպ. «Փաթաղիկէս» բառս այս չէ Հայոց: Թուի ինձ, եթէ հելլենացի բառ համարելի է, կամ թէ լաւ ևս ասել հելլենացուցեալ լատինականն *fatalicus*, որոյ ծագումն յետին ժամանակաց այն է, սկզբան Միջին դարուց ընծայելի է»:

...Ձիմաստասիրական զգործս խորենացույ «փաթաղիկէս» կոչէին պարեգօտաւորք ժամանակին, թերևս ցուցանել կամելով այդու, եթէ վարդապետութիւն նորա ի փիլիսոփայական ի գրուածս նորա առաւել արտաքին

¹⁷ Ղազար Փարպեցի, Թուղթ առ Վահան Տէրն Մամիկոնեից, էջ 24:

¹⁸ Նույն տեղում, էջ 27:

¹⁹ Նույն տեղում, էջ 28:

²⁰ Նույն տեղում, էջ 15-18:

իմասնոց էր և հեթանոսական, յոյր սակս և վնասաբեր, քան թե քրիստոնեական և օգտաբեր: Այլ այս կարծիք ևեթ է, գոր առաջարկենքս»²¹:

Մովսես Խորենացուն է վերագրվել նաև մեկ ուրիշ հալածյալի (անունն անհայտ է թուրք ընկած լինելու պատճառով) ոսկորները գերեզմանից հանել տալն ու գետը թափելու սարսուղդու և պիղծ միջադեպը: Հետո նա հիշում է հարգելի տեր Խոսրովիկին, որը գիտելիքների պաշարով տուն էր վերադառնում, սակայն կես ճանապարհից հետ շրջվեց, որովհետև լսեց տգետների մահաձայն աղերսների աղմուկը: «Ահա ուր գայ միս ևս թարգմանն»²²:

Ղազար Փարպեցու «Թուղթը» հզոր տրամաբանությամբ և արդարամիտ խղճով ստեղծված մի զորավոր փաստաթուղթ է, որի ներգործուն ուժի տակ Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնյանը արդարորեն հետ է վերադարձրել իմաստուն այդ մարդուն և պատվիրել գրելու իր ժամանակի «Հայոց պատմությունը»: «Եւ զկնի այսր դարծի, կարծի ինձ, եթէ հրամայեալ իցէ նմա զօրաւարին Հայոց գրել գՊատմութիւնն, յորում մեծաւ սիրով զբաջութիւնս և զիմաստութիւն մարզպանին Կենդանագրէ»²³, - գրում է հայագետը:

Սկստիչ էմինի «Թուղթ առ Վահան Տէրն Մամիկոնէից» հրապարակումը հայագետի առաջին շրջանի աշխատություններից է, այդ աշխատասիրությանը հետևեցին հայ միջնադարյան մատենագրությանը նվիրված բազում նոր հետազոտություններ, որոնք էլ կազմեցին նրա վիթխարի գիտական ժառանգությունը՝ իրավագիտորեն միջազգային հայագիտության մեջ նրան բերելով հեղինակին հասանելիք փառքը:

²¹ Նույն տեղում, էջ 64:

²² Նույն տեղում, էջ 18:

²³ Նույն տեղում, էջ 29: